

## Հայտարարություն

Մասանագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ Արմավիրի մարզպետարանը հայտարարում է մրցույթ **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 93-1.5-Մ6-1)** թափուր պաշտոնը համալրելու համար և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա **2021 թվականի փետրվարի 2-ին, ժամը 11.00-ին** ՀՀ Արմավիրի մարզպետարանի վարչական շենքում (ք. Արմավիր, Աբովյան 71):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- 1) անձնագիր (ՀԾ համարանիշ)
- 2) դիպլոմ (առկայության դեպքում)
- 3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
- 4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ **111.115** (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ <http://armavir.mtad.am/files/docs/52216.pdf> : Աշխատավայրի հասցեն է՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան, ք. Արմավիր, Աբովյան 71 ):

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է **2021 թվականի հունվարի 27-ը**:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 0237-2-16-29 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն [armavir.andznakazmi.karavarum@gmail.com](mailto:armavir.andznakazmi.karavarum@gmail.com) էլեկտրոնային հասցեին: